

բանականներ, որոնց մէջ նշանաւոր է Զմիւռնիայի առաջնորդ Տ. Մելքոնեղէկի Արք-եպիսկոպոսի իմաստալի և սըրտամորմոր ճառը:

Յաւիտենական հանգիստ քրտնաշան վաստակաւորին:

ՄԱՄՈՒԼԻ ՍՏՈՒԵՐԸ

Որբան էլ կամենանք լաւատես լինել, չենք կարող ուրանալ, որ Վենետիկի Պազար կզգու միարանները չեն սիրում ոչ սիսալ դրալ և ոչ խրեանց նախորդաց վրայ սիսալ յիշել. այս բնական հետեւութիւն է անսխալականութեան դաւանանքի: «Էռումայի» անցեալ համարում տպուած Շիրակաւանի ժողովը յօդուածը, վրդովիր է «Բազմավէալի» խմբագրութեան և մէկը խօսելով ու գովասանելով այդ համարը, յարձակում է, նախ հայոցելով ինձ՝ իրը թէ ես ատելութեամբ տոգորուած եմ կաթուդիկութեան («) դէմ (եղուիթութեան դէմ այն) և ապա սխալ է գտնում մեր ասածը թէ Զամշեանը վերագրում է Քաղկը, դէմ գումարուած Մանազկերտի հայ-ասորական ժողովը ոմն Յովի. Մանազկերտցու և հ. Զ. նոյնը ակնարկում է իւր գովորութեան պատմութեան մէջ. և ասում է այդ խօսքի արուեստակը թէ Զամշ. ընդունում է Օձնեցու ժողովը և հերքում է «վաւերականութիւնը» Յ. Օձնեցոյ ընծայուած պատմութեան մը այդ ժողովոյն վրայ. այլև հ. Զ. այդ է կըկնած:

Թող գիտենայ հ. Տ., որ խօսքը Մանազկերտի այն ժողովի մասին է, որ գումարուել է Ասորոց հետ ընդդէմ Քաղկերի և այն գրութեանց, որոնք այդ են հաստատում: Իսկ Զամշեան իւր պատմութեան Բ. 352—353 բացէ ի բաց վերագրում է Օձնեցու այդ ժողովը ոմն Յովհաննէս Մանազկերտցու, իւր ստեղծած տեղապահին, որ ժողով գումարելու այնքան իշաւասութիւն ունէր, որքան հ. Տ. Նշմարտութիւնը խոստովանելու իսկ 577—630 ոչ թէ մի պատմութեան վաւերականութիւնն է հերքում, այլ պնդում է՝ որ Օձնեցին խօսքով, գործով ու ժողովով հակառակ չէ եղել Քաղկերին: Հարցը միայն այդ կէտի վրայ է և այդ «մոլորութիւնն» ու «մտութիւնն» և գրուածները՝ Հ. Գ. Զ. Զամշեանի վրայ յենուելով մեր պատ-

մըշաց ումանց (***) մէջ Օձնեցուն և Յովիան Մանազկերտցուն շփոթած է համարում: Պարզ չէ:

Եւր խօսքի արուեստակութիւնից ոչինչ չահելով Կ. Տ. Ս. Ս. ասում է՝ իբր թէ Խորովիկը գանգատում է Օձնեցու ղէմ գաւանափոխութիւն համար, ըստ որում և նմանում է Ջրի վրայից խորի բռնող խեղդուղի, և իւր խօսքին հաստատութիւն է բերում, որ Տաշեանն էլ այդ է խոստովանում: Բայց Կ. Տ. Ս. կարող էր նեղութիւն քաշել նայել նոյն իսկ զրչագրաց մէջ և կտեսնէր, որ արդտեղ ոչ անուն կայ, ոչ կտժուղիկոս է յիշուած և ոչ էլ յովտի չափ հիմք կայ կարծելու թէ նա Հայոց առաջնակարդ հոգեսրական է: Ասողիկի, Կիրակոսի, Միքայէլի, Օրբէլի, Վարդանի, Միսիթ. Արիվանեցու, այլև Հայրապետի բանախօսութեան, Արուրֆարաճի, Արշարունու դիմաց Կ. Տ. Ս. օճառի փամփուշտ է փայլատակեցնում (հմմտ. Հայասեկեղ. և Բիւլ. ժող. պար. ԺԲ.):

Եետոյ ասում է Կ. Տ. Ս. Ս., որ Յովիաննու թարգմանչելիշած եռետիկոսը Աշոտ Մսակերի ժամանակ (+720) է եղել, որ և հաստատում է Վարդանի և Միսիթար Արիվանեցու (Կ. Տ. Ս. Ս. չգիտէ վերջինից լինելը, այլ հ. Գ. Զ.-ից) վկայութեամբ, բայց չէ կարողացել տեսնել Վարդանի 78 և 82 էջերում թէ Բնչպէս է Նանա սարկաւադը մինչև 862 թիւը ապրել ու ներկայ եղել Շիրակաւանի ժողովում: կամ Բնչպէս է Բուղայի մօտ գերի ընկել և հայերի հետ տարիներ յետոյ ազատուել. տեսէք ձեր պաշտօած Զամշեանը Բ. 451-678. շինի թէ Նանա ապրած համարէք աւելի քան 160 տարի՝ Անդրադնէք: Ականատեսի խօսքը մերժենք ուրիմն ԺԳ. և ԺԴ. դարերի պատմչաց խառնուած թուերով:

Ապա Կ. Տ. Ս. Ս. զրպարտում է ինձ իբր թէ «անուղղակի» եմ ուզում իմանալ ժողովի որոշումը մինչդեռ հրատարակուած են կանոնները: Դուք մրտեղից գիտէք որ ժողովի որոշումը այդ նզովքներն են. չէ որ ես ունիմ թէ տպածները և թէ պաշտօնը, որտեղ այդ նզովքները միայն Վահանի առաջարկութիւնն է: Կ. Տ. Ս. Ս., իւր հրւսուածքը վերջացնում է նկատելով թէ Զամիլը ասել է, որ Մտուաց կեղծ թուղթ է զրել: Դուք էլ Կ. Տ. Ս. Ս., կարող էք շատ շոյել ձեր երևակայութիւնը ըստ քմաց մաքեր ծներով, այլ սակայն ապացուցանել է պէտք. մէնք անսխալականութիւն չենք ընդունում. և արժէ խօսել

ձեր գիտութեան ակներև դիմակի դէմ:

Աւ դուք ու ձեր նմանիք թէ որքան դիմակաւորուած էք յայտնապէս և զրբան մոլի կուսակցակոն, ահա թարմ փաստեր.

Ոմն Թորոսեան թարգմանելով Կելցերի ՇՓաւոտոս Բիշ-ղանդը, յառաջարանում գրում է. «բայց ամենչն աւելի կա-
րեւոր կէտը, որ և դուցէ բավանդակ գրութեան նպատակը կը կազմէ, այն է թէ ս. Լուսաւորիչը Վաղարշապտի մէջ չէ հիմ-
նած նախակին ազգային եկեղեցին Մայր եկեղեցին, այլ Տարո-
նոյ Աշտիշատ քաղաքին մէջ... Իրողութիւն մ'է այս—ոչ ամե-
նուն ախորժելի—պատմական փաստերսկ (?) հաստատած, որ
իրմէ նախորդ գիտնոց տիսութենէն վրիպելէր, և որով կըտա-
պալին շատ մի երեակայեալ շէնքեր, չափազանց պահանջներ,
կարծեցեալ իրաւասութիւններ....

Այս ցնդած խօսքերի հեղինակը արդեօք չպէտք է գիտե-
նար, որ նախ Գելցերի նպատակը գույշէ չափ անդամ այդ
եղած չէ, այլ Փաւոտոսի արժեքը ցոյց տալն է մեր եկեղեցու
նկատմամբ: Երկրորդ՝ պէտք է հասկանար, որ Տարոնի եկեղե-
ցին էլ Հայաստանումն է, որպէս և Ս. Թաղէոսի վանքն Ալ-
տազում և ուրիշ շատ եկեղեցիներ նաև նախքան Ս. Լուսաւո-
րիչը: Այլև որ Ս. Լուսաւորիչը Տրդատին բժշկելուց յետոյ կոյ-
սերի վկայարանները չինեց և Ս. Էջմիածինն ըստ տեսլեան
ձեակերպեց ու շրջապատեց: Երբորդ՝ կարող էր մոլեռանդու-
թիւնը թողնել և կարդալ զօրօր. Քիւզանդի երես. 32 (Պետերբ.՝),
որտեղ Վաղարշապտակ ճնախ եկեղեցին», իւր պատիւն ունէր
վայելչապէս:

Վերջապէս եթէ այդքան կորուարիր էք, հապա քաջու-
թիւն ունեցէք խօստովանելու, որ ոչ թէ մի հայագէտ, այլ
բազմաթիւ լատինապէտ ու յունագէտ պատմաբան գիտնական.
Ներ անթիւ փաստերով ապացուցել են Պետրոսի Հռովմում
բնաւ ԶեղԱԾ լինելը:

Ահա որպիսի կուսակցական խաւարով քողաբորբուած էք
դուք և ձեր նմանիք, Կ. Տ. Ս. Ա.:

Բայց ահա և յունիսի տետրը, սկզբի հատածում Հ. Ս.
Երեմ. Կրօնի և ազգութեան վրայ է խօսում, շտապում է ոգե-
ւորուիլ բանաստեղծի խօսքերով և նոյն իսկ գրութեան վեր-
ջում ասում է նախ թէ՝ «Կաթուղիկէ (իմա Հռովմէական) քա-
հանային դաւանանքն ամենափոքր տարբերութիւն մը միայն
լուրսն ս.

ունի լուսաւորչականինէն, (***). և յետոյ՝ ուրիշ խօսքերով մօտաւորապէս այս է ասում. ըստ բանաստեղծին մենք եղայր-ներ ենք. ահա բողոքականք գողանում են ձեր գառներից. երբ մի քանիսն էլ մենք ենք գողանում, ինչու էք գոշում, բողոքում, չէ որ եղայր ենք.

Միթէ բողոքականի գողութիւնը կարդարացնի ձեր գողութիւնը, և. Երեմ, Եղայրութեան հիմքը սէրն ու համբերատարութիւնն է և ոչ թէ Հռովմէական մոլեւանդութիւնը և ոյածիլ ընդ ծով ցամաք առնել եկամուտ մի. և յորժամ լինիցի առնէք սրդիս գեհենի կրկին և քան զձեղ^ա (1).

Մի երկու խօսք էլ կ. Տ. Ա.-ի և նմանեաց դաշնակցի մասին:

Լոյօլա գրքի մատենախօսութեան մէջ անցեալ Շ.ու. մայում, մի փոքրիկ նկատողութիւն էինք արել՝ որ կարելի պէտք է լինէր առաջարկելու կազմողին՝ լրացնել նկատուած պակասները և նորից ներկայացնել ընկերութեան։ Զինի՞ թէ նոր սկզբունքներով են առաջնորդում բացասական կեանքի այդ նոր պահպանողականները։ Յետոյ ասել էինք, որ տեղի սղութիւնը և մատենախօսական նեղ շրջանակը թոյլ չեն տալիս բովանդակութեան վրայ մանրամասն խօսելու։

Մերժողների նախադաս Լէօ չէ կարողացել տանել մեր հարցականը և եթել է մի բան ասելու։ Մի մեծ նամակով ասում է՝ որ ընկերութեան յանձնարարութեամբ է գիրքը գրուել, որ հեղինակը պէտք է յիշեր իւր աղբեւրները, որ թարգմանել է

¹⁾ Մազալու է յիշեալ թերթի կերաբերմունքն առ Մշակ^ա. Տ. Երեմ. մի շարք արամագլական ներբողներ է անում և յետոյ կամ ի միջի այլոց ասում է, որ նա բարձր դիրք կունենայ, ոեթէ իւր թերթերէն պակաս չլնէ գէպի ողջմուութիւն, գիտութիւն, յառաջադիմութիւն մղող ընտիր և ամփոփ առաջնորդող յօդուածներ։ զորս ի գործ կը դնէր իւր հիմնադիրը։ Մշակ^ա աւելի ուղղամիտ ընթացք մը բռնած կրլայ, ևթէ իւր գիրիւը միջնադարեան (!!) կրօնից իւր խարազան և Տարվինականութեան իր դափնիի տերև չգործածէ, 1899 կ. 338. «Մշակ իր խարազանը գեռ կը շարժէ։ Ուընան, Տարուին, Զօլայ կը պաշտպանուին, թող պաշտպանուին, միայն չի մոռանք՝ որ առանց կրօնի հայութիւնը դիմու մընէ»։ Այս ամենն այն լրագրի մասին է ասում, որի մասին նոյն յօդուածում գրում է. «որ գիտէ պատույ արժանաւորին արժանիքը»։ 1900 Ն 11. էջ 512.

Բըկովի գրքից, որով հասկանայինք թէ ինչու մերժել են, Յետոյ ասում է, որ կաղմողը քաղուածներ է արել Նալբանդեանի յօդուածից:

Թողլընթերցողը համեմատէ. մենք ինչ ենք ասում, իսկ սա ի՞նչ. «Կազմեց» է գրուած, ուրեմն աղբիւրներից է քաղել. Չենք ուղեցել բովանդակութիւնը քննադատել, չենք որոնել աղբիւրները. մեր հարցն այլ է եղել և վերև գրուած է: Այս պարզ է:

Բայց դուք լէօի զէնքը տեսէք. մի շարք հայկոյանքներ շպրտելով ասում է. «Հայաստ. տիրացուներին յատուկ է մեծ մեծ վճիռներ կարդալ, առանց կարդալու, սովորելու. Տգիտութեան յատուկ է անձնապաստանութիւնը. Այդ տղիտութիւնն է պատճառ որ աստուածաբանն ապլօմբով յայտարարում է թէ «հայերէն ոչինչ չունինք եղուիտութեան մասին գրուած» . մինչդեռ Մ. Նալբ. դեռ 1857-ին է տուել Լօյօլայի և եղուիթական կարգի մանրամասն (!) պատմութիւնը ») «Թափառական Հրէայր վէպի թարգմանութեան սկզբում:

ՄԵՆՔ ասել ենք . իսկ եզրուիթութեան մասին մի գիրք գիտենք՝ «միզուիթն» տպուած ի Կ. Պ., որ տեսած չենք» — հետևաբար մեր խօսքն ամենքին մատչելի դրբի մասին է և ոչ յառաջաբանի կամ յօդուածի **յ; Ապլօմբ չկայ և պարբերութիւնը սկսում է «որքան ինձ յայտնի է», որ հեռու է ապլօմբից: Իսկ բարձրայօն պարոնի հայհոյանքները իրեն թողնելով հրաւիրում ենք ընթերցողի ուշադրութիւնը մի կէտի վրայ. ինձ «տգէտ» է անուանում: Որ ԲՀկովի տետրից ու «Թափառական հրէայի», յառաջաբանից մեծ դիտութիւն է ձեռք բերել Լէօն եզրութեաների մասին, այդ իմացանք. արդեօք բարի չի լինիլ մեզ յայտնելու թէ ինքը գոնէ որ միջնակարգ դպրոցի ուսման դասընթացքն է աւարտել:

U. S. I. R.-Միմեան

^{*)} Իւր անձնական միծամեծ արժանիքներ երևակայող պարոնն այնքան ողորմելի է, որ չգիտէ թէ եզութիւնական կարգի մանրամասն պատմոթիւնը հազիւ կարելի լինի անել «Թափառական հրէայ» գրքի հայերէն հաստորի պէս երկու երեք հաստորներում !!!